## ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Հայեր Վրաստանի մէջ եղած են պատմութեան հին դարերէն եւ երկու երկիրներուն սահմանամերձ գաւառներուն մէջ միշտ ալ եղած են հայ-վրացական խառն բնակավայրեր:

Վրաստանի հայկական գաղթօճախը զարգացման ու բարգաւաճման նոր հանգրուան մը թեւակոխեց արաբական արշաւանքներէն, Վրաստանի (եւ Հայաստանի) մէջ Բագրատունեաց թագաւորութեան հաստատումէն եւ սելճուքեան արշաւանքներէն ետք, երբ մեծ թիւով հայեր Վրաստան ապաստանեցան, հայ ազնուական տուներ բարձր դիրքերու տիրացան վրացական արքունիքէն ներս եւ իրենց իշխանութիւնները եւ կենսատարածքները հաստատեցին սահմանամերձ տարբեր գաւառներու ու ամրոցներու մէջ:

Վրաց Բագրատ Գ. (978-1014) եւ Բագրատ Դ. (1014-1072) թագաւորներուն օրով գաղթօճախը մեծապէս ստուարացաւ եւ կազմակերպուեցաւ. քաղկեդոնական դարձած Մամիկոնեանները եւ անոնցմէ սերած Օրբէլեանները բարձր դիրքերու տիրացան, իսկ Զաքարեաններուն նախնիները Խոժոռնիի մէջ հաստատուեցան եւ այնուհետեւ մեծ հեղինակութիւն ձեռք ձգեցին:

# ՎՐԱՑ ԲԱԳՐԱՏ Գ. ԵՒ ԲԱԳՐԱՏ Դ. ԹԱԳԱՒՈՐՆԵՐՈՒՆ ՕՐՈՎ
# ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐ ԴԷՊԻ ՎՐԱՍՏԱՆ

### ՎՐԱՑ ԲԱԳՐԱՏ Գ. ԹԱԳԱՒՈՐԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ

Վրաստան Ը.-Թ. դարերուն աւատական տիրոյթներու բաժնուած էր, երբ Բագրատունիներու հայ նախարարական տան մէկ ճիւղը հոն հաստատուեցաւ, քաղկեդոնական դաւանանքը ընդունեց, վրացի դարձաւ, թագաւորութիւն հիմնեց եւ սկսաւ միաւորել երկիրը: Այս ժամանակ տակաւին Աբխազիա հզօր թագաւորութիւն էր եւ անոր թագաւորը՝ Լեւոն Բ. ամբողջ արեւմտեան Վրաստանը միաւորած էր Էգրիս-Աբխազական թագաւորութեան մէջ՝ իբրեւ մայրաքաղաք ունենալով Քութայիսը: Անոր սերունդները, Բագրատունիներու կողքին, ամէնէն հզօր ուժն էին շրջանին մէջ:

Այս ժամանակ, 978ին աբխազ խումբ մը ազնուականներ գահընկէց ըրին իրենց թագաւոր Թէոդոսին եւ գահ բարձրացուցին անոր քրոջ զաւակը՝ Բագրատ Գ., որ հօր կողմէն վրաց Բագրատունիներու սերունդէն էր: Բագրատ Գ. ճնշեց կեդրոնախոյս ուժերը եւ կարգ ու կանոն հաստատեց: Տայքի կիւրապաղատ Դաւիթի մահէն ետք (1000ին) Բիւզանդիոնի Վասիլ Բ. կայսր Բագրատին կիւրապաղատի տիտղոս եւ Տայքի մէկ մասը շնորհեց: Հօր մահէն ետք, 1008ին, Բագրատ դարձաւ նաեւ Քարթլիի թագաւոր եւ միաւորեց Վրաստանի մեծ մասը. ան վրացական միասնական պետութեան գլխաւոր հիմնադիրը դարձաւ:

Այս ժամանակ Մամիկոնեաններուն քաղկեդոնական դարձած հատուածը արդէն բարձր դիրքերու տիրացած էր Վրաստանի եւ անոր սահմանամերձ հայկական գաւառներու մէջ: Անոնք ազդեցիկ էին յատկապէս Վրաստանի արեւմտեան Արգվեթի գաւառին մէջ, իբրեւ կեդրոն ունենալով Կացխի ամրոցը: Արգվեթիի Մամիկոնեանները տարիներու ընթացքին կորսնցուցին իրենց հայեցի դիմագիծը, Բագուշի տոհմանունը ստացան եւ իբրեւ վրացի ազնուականներ՝ երկրին աւատական հզօր տուներէն դարձան:

Գուգարքի հիւսիսարեւելեան Օրբէթի ամրոցի Մամիկոնեանները, որոնք նոյնպէս քաղկեդոնական դարձած էին եւ Օրբէլեան տոհմանունը ստացած, իրենց կարգին բարձր դիրքերու տիրացան վրացական արքունիքին մէջ եւ այնուհետեւ թագադիր ասպետի, սպարապետի եւ այլ բարձր պաշտօններ ստացան:

### ԿԻՒՐԻԿԵԱՆ ԴԱՒԻԹ ԱՆՀՈՂԻՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՕՐՈՎ՝ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս ժամանակ Կիւրիկեան թագաւորութեան հիմնադիր Գուրգէն 991ին հրաժարեցաւ գահէն եւ աշխարհիկ կեանքէն եւ Սանահինի վանքին միաբան դարձաւ: Անոր յաջորդին՝ Դաւիթի օրով հայ-վրացական յարաբերութիւնները նոր թափ ստացան եւ առեւտուրը զարգացաւ:

Դաւիթ թագաւոր հաւանաբար 1005ին Ձորագետի եւ անոր հարկատու Միխխանայի միջեւ, երեք կողմէն խոր կիրճերով շրջապատուած, 1490 մեթր բարձրութեամբ կանաչազարդ սարահարթի մը վրայ ձեռնարկեց Լոռէ (կամ Լոռի) ամրոցի կառուցման, որուն շուրջ արագօրէն պարսպապատ բնակավայր մը կազմաւորուեցաւ, իսկ միջնաբերդի կիրճերուն մէջ արհեստական պատնէշներ կառուցուեցան՝ ինքնապաշտպանութեան նպատակով: Տարիներու ընթացքին կառուցուեցան նաեւ պալատներ, եկեղեցիներ, բաղնիքներ, կամուրջներ եւ խաչքարեր: Կառուցուեցաւ նաեւ գետնուղի, որ հասաւ մինչեւ Միխխանա գետ, ուր աշտարականման կառոյց մը կանգնեցուեցաւ: Գետնուղին օգտագործուեցաւ արտաքին աշխարհին հետ կապ պահելու եւ պատերազմի ժամանակ խմելու ջուր ձեռք բերելու համար:



Վրացական Գելաթի վանքը, կառուցուած՝ ԺԲ. դարուն

Հիւսիսային առեւտրական ճանապարհներուն վրայ գտնուելով՝ Լոռի արագօրէն զարգացաւ, բարգաւաճեցաւ եւ առեւտրական ու արհեստներու կարեւոր կեդրոն դարձաւ: Անիկա առեւտրական ճանապարհներով կապուեցաւ Անիի, Դուինի, Դմանիսի, Տփղիսի եւ Վրաստանի տարբեր քաղաքներու հետ:

Դաւիթի օրով հին ամրոցները եւս ամրացուեցան՝ թագաւորութեան պաշտպանութեան եւ առեւտրական ճանապարհներու հսկողութեան համար: Անոնցմէ Տաւուշ բերդը՝ համանուն գետի աջ ափին, ժայռերով եզերուած բլուրի գագաթին. անիկա նախապէս Աշոտ Բ. Երկաթ թագաւորի կուսակալներուն կեդրոնն էր: Կայան (Կայեան կամ Կայենականք) բերդը՝ Աղստեւ գետի ձախ ափին, դժուարամատչելի դիրքի մը վրայ, որ հաւանաբար Աշոտ Բ. Երկաթ թագաւորին կողմէ կառուցուած էր, ռազմագիտական կարեւոր յենակէտ դարձաւ եւ ուրկէ կը կատարուէր Հայաստանէն Վրաստան եւ մինչեւ Ատրպատական երկարող մայրուղիին հսկողութիւնը: Կայծոնի (կամ Ամանակ) ամրոցը, Դեբեդ գետի աջ ափին, բարձր եւ անմատչելի ժայռերով եզերուած, Կիւրիկեան թագաւորութեան գլխաւոր ամրոցներէն մէկը դարձաւ եւ մեծ դեր ունեցաւ այդ շրջանի ապահովութեան պահպանման մէջ. Լոռիէն, Հաղբատէն եւ Սանահինէն երկարող ճանապարհը հոնկէ անցնելով կ'երթար մինչեւ վրացական Կամբեճան գաւառը, որ մեծամասնութեամբ հայաբնակ դարձած էր: Կայծոնի կողքին, Կողբաքար եւ Խալինջաքար ամրոցները կարեւոր կայաններ դարձան դէպի Վրաստան ճամբուն վրայ, ինչպէս նաեւ անոնցմէ արեւելք, Աղստեւ գետի ձախ ափին, Գագայ դաշտին հարաւը գտնուող Գագ բերդը:

Դաւիթ թագաւոր ներքին կեդրոնախոյս ուժերը ճնշելէ ետք կռուի բռնուեցաւ Տփղիսի արաբ ամիրային հետ: Տփղիսի արաբ ամիրայութիւնը սահմանակից էր Կիւրիկեան թագաւորութեան: Վրաց Բագրատունիներու թագաւորութիւնը չէր յաջողած նուաճել այդ կենսատարածքը, եւ Վրաստանի սրտին թառած Տփղիսի ամիրայութիւնը շրջանային կարեւոր ուժ մըն էր եւ կ'ընդգրկէր Տփղիսը իր շրջակայքով, Կուր գետի վերին աւազանը, Ռուսթաւին, Գարդաբանի գաւառը եւ հիւսիսային կողմէն կը հասնէր մինչեւ Մցխեթայի սահմանները: Ամիրայութեան գլխաւոր յենարանները Հիսնի, Սակուրէթ եւ Ասկուրէթ ամրոցներն էին: Ամիրայութեան սահմաններուն մէջ մեծ թիւով հայեր կը բնակէին եւ Տփղիսէն հարաւ կը գտնըւէր Տիրանաւոր վանքը: Յիշենք նաեւ, որ Օրբէթ ամրոցը ամիրայութեան արեւմտեան սահմանին մօտ, եւ վրաց Բագրատունիներու ու Կիւրիկեան թագաւորութեան սահմաններուն վրայ կը գտնուէր եւ Օրբէլեանները ռազմագիտական խիստ կարեւոր դիրք կը գրաւէին:

Վրացական հողերէն, ամիրայութեան սահմաններէն ներս խուժելով Դաւիթ թագաւոր մեծ յաղթանակ տարաւ ամիրային դէմ եւ սասանեց ամիրայութեան ուժը: Այս յաղթանակը կարեւոր նշանակութիւն ունեցաւ ամիրայութեան հեղինակազրկման, տկարացման եւ աստիճանական անշքացման մէջ, որուն շնորհիւ վրացական այդ կենսատարածքները միացան վրաց Բագրատունիներու թագաւորութեան:

Իր ռազմական զօրութեան վրայ յենած՝ Դաւիթ 1001ին ըմբոստացաւ իր գերագահ հայոց շահնշահ Գագիկ Ա. թագաւորին դէմ, բայց պարտուեցաւ եւ կորսնցուց իր գրեթէ բոլոր տիրոյթները: Այս պատճառով ալ ան այնուհետեւ կոչուեցաւ Դաւիթ Անհողին: Բայց յետոյ Գագիկ Ա.ի գերադասութիւնը ընդունելէ ետք ան յաջողեցաւ վերականգնել իր թագաւորութիւնը:

### ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԸՆԴԴԷՄ ԱՐՏԱՔԻՆ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒ

Վրաստանի Բագրատ Գ. թագաւոր մահացաւ 1014ին եւ անոր յաջորդեց Բագրատ Դ. (1014 - 1072): Անոր օրով յարաբերութիւնները աւելի սերտացան Վրաստանի եւ Կիւրիկեան թագաւորութեան միջեւ:

Այս ժամանակ Գանձակի Շատտատեաններու արաբ ամիրայութիւնը զօրացած էր եւ կը սպառնար Վրաստանի թագաւորութեան: Գանձակի ամիրայութիւնը կ'ընդգրկէր Կիւրիկեան թագաւորութենէն արեւելք տարածուող ընդարձակ եւ բերրի շրջաններ՝ իբրեւ կեդրոն ունենալով Գանձակը: Գանձակի Փատլուն արաբ ամիրան 1030ին մեծ ուժերով ներխուժեց վրացական հողեր եւ սահմանամերձ Կամբեճան գաւառէն յառաջանալով՝ կռուի բռնուեցաւ վրաց Բագրատունիներուն հետ: Վրացիք թէեւ բաւական ուժեղ բանակ ունէին, բայց սկզբնական շրջանին չյաջողեցան կազմակերպուած դիմադրութիւն ցոյց տալ ներխուժողներուն եւ բռնեցին նահանջի ճամբան: Գանձակի եւ Տփղիսի արաբ ամիրայութեանց միջեւ գտնուող Կամբեճան գաւառը նուաճելով՝ Գանձակի ամիրայութեան ուժերը կը սպառնային հասնիլ Տըփղիսի ամիրայութեան սահմանները, որմէ ետք ամբողջ արեւելեան Վրաստանը կրնային իրենց ենթարկել:

Ճակատագրական այդ պահուն Դաւիթ Անհողին իր ուժերով օգնութեան հասաւ վրաց Բագրատ Դ. թագաւորին, բան մը, որ փոխեց դէպքերուն ընթացքը, Բագրատ Դ. յաջողեցաւ կասեցնել Փատլունի յառաջխաղացքը եւ այնուհետեւ նահանջի մատնեց զայն:

Հայոց Գագիկ Ա. թագաւորի մահէն ետք (1020ին), անոր զաւակներուն՝ Յովհաննէս Սմբատի եւ Աշոտի միջեւ գահակալական երկար վէճերէն օգտուելով՝ Շատտատեանները զօրացած էին եւ 1020ական տարիներուն սկիզբը տիրացան Դուինի, ուր 1022ին իշխանութիւն հաստատած էր Ապուլ Ասուար: 1030ական տարիներուն Նախճաւանի իշխանութեան տիրացաւ Ապու Տուլաֆ:

Զօրացած Շատտատեանները Գանձակի կողմէն յառաջանալով՝ 1040ին յարձակեցան Կիւրիկեան թագաւորութեան վրայ: Անկարող դիմադրելու արաբական հզօր ուժին, Դաւիթ Անհողին օգնութիւն խնդրեց հայոց Յովհաննէս Սմբատ թագաւորէն, Սիւնիքի թագաւորէն եւ Աղուանից Յովսէփ կաթողիկոսէն: Օգնական զօրք ղրկեց նաեւ վրաց Բագրատ Դ. թագաւորը: Հայ-վրացական միացեալ զօրքերը դուրս մղեցին Շատտատեանները Լոռիի սահմաններէն եւ ի վերջոյ ջախջախեցին զանոնք:

### ԱՆԻԻ ԱՆԿՈՒՄԷՆ ԵՏՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ՄԵԾ ՀՈՍԱՆՔՆԵՐ՝ ԴԷՊԻ ՎՐԱՑԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ

1045ին վերջ գտաւ Բագրատունեաց հարըստութիւնը եւ մայրաքաղաք Անին գրաւուեցաւ բիւզանդացիներուն կողմէ: 1047 - 1048ին սկըսան սելճուք - թրքական արշաւանքները Հայաստանի վրայ: Այս ժամանակ ալ, 1048ին մահացաւ Դաւիթ Անհողին եւ անոր յաջորդեց Կիւրիկէ Ա. (1048 - 1089), իբրեւ Կիւրիկեան թագաւորութեան թագաւոր:

Սելճուքներու ջարդերէն, հալածանքներէն ու անապահովութենէն փախչելով՝ Անիի եւ շըրջակայ գաւառներու բնակիչները բռնեցին գաղթի ճամբան. անոնցմէ ոմանք Վրաստան գաղթեցին եւ գլխաւորաբար Դմանիսի, Շամշուլդէի եւ Տփղիսի շրջաններուն մէջ բնակութիւն հաստատեցին, շատեր ալ շարունակեցին իրենց ճամբան եւ հասան մինչեւ Խրիմ, Մոլտաւիա, Կալիցիա եւ յարակից երկրամասեր:

Յիշենք, որ Դմանիս եւ Շամշուլդէ գաւառները Կիւրիկեան թագաւորութեան եւ Վրաստանի սահմաններուն վրայ գտնուելով սկըզբնական շրջանին որոշ ժամանակ Կիւրիկեան թագաւորութեան կազմին մէջ մտած էին, իսկ Տփղիսի մէջ արաբական ամիրայութիւն հաստատուած էր:

Այս ժամանակ հարաւային Հայաստանի Կորճայք նահանգի Կարթունիք գաւառէն Արծրունիներու քրտացած մէկ ճիւղը հիւսիսային Հայաստան գաղթեց հետեւեալ պայմաններուն տակ. անոնց սերունդէն Խոսրով, 1048ին Մեծ Զաւ գետի կիրճին մէջ սելճուքներու դէմ բիւզանդական զօրքերու տարած յաղթանակէն ետք իր տոհմով անցաւ Գուգարք եւ ճանչնալով Կիւրիկէ Ա.ի թագաւորութիւնը՝ անկէ ստացաւ Խոժոռնի գաւառակը՝ համանուն ամրոցով, ուր հաստատուեցաւ իր տոհմին հետ: Անոր սերունդը այնուհետեւ հռչակաւոր դարձաւ եւ ԺԲ. դարուն իր տոհմապետ Զաքարիայի անունով Զաքարեան տոհմանունը ստացաւ եւ մեծ դեր խաղաց վրաց արքունիքին եւ Հայաստանի հիւսիսարեւելեան գաւառներու պատմութեան մէջ:

### ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՑՈՒՄԸ

Բագրատունիներու Անիի թագաւորութեան անկումէն (1045) եւ այնուհետեւ Կարսի թագաւորութեան անկումէն (1065) ետք, Կիւրիկեան թագաւորութիւնը Բագրատունեաց միակ իշխանութիւնն էր, որ կը պահէր իր գոյութիւնը:

Սելճուքները 1064ին յարձակեցան Կիւրիկեան թագաւորութեան եւ Վրաստանի վրայ. այս պայմաններուն տակ Կիւրիկէ Ա. ստիպուած հպատակութիւն յայտնեց սուլթան Ալփասլանի, այդպէսով պահելով իր իշխանութիւնը եւ փրկելով երկիրը աւերածութենէ:

Կիւրիկէ Ա. իր մայրաքաղաք Շամշուլդէ (Սամշուլդէ, Սամշվիլդէ) բերդ - բնակավայրը 1065ին վրաց Բագրատ Դ. թագաւորին զիջեցաւ, որմէ ետք Լոռի ամրոցը աթոռանիստ դարձաւ:

Շամշուլդէի Վրաստանի յանձնումով բաւական հոծ թիւով հայութիւն Վրաստանի գերիշխանութեան տակ կ'անցնէր: Կիւրիկեան թագաւորութիւնը նաեւ ռազմագիտական խիստ կարեւոր յենարան մը կը կորսնցնէր, որովհետեւ Շամշուլդէ Խրամ գետի եւ անոր հարկատու Ջիվչաւի վտակի ձորերով պաշտպանուած, եռանկիւնաձեւ սարահարթի մը վրայ գտնուելով եւ միայն արեւմտեան կողմէն ելումուտքի կարելիութիւն ունեցող (ուրկէ կ'անցնէր ժայռափոր ճանապարհը), կրաշաղախով կառուցուած եւ բարձր պարիսպներով ու աշտարակներով պաշտպանուած անառիկ միջնաբերդ մըն էր, իր դղեակով, պալատներով, եկեղեցիներով, բաղնիքներով ու ջրամբարով:



Տաւուշի բերդը

Վրաստանի կազմէն ներս անցնելով Շամշուլդէ սկիզբը Կլդէկարիի Լիպարիտեան տոհմին յանձնուեցաւ, բայց յետոյ վրաց արքունիքը իր հովանաւորութեան տակ առաւ զայն, հոն վրացական եկեղեցի կառուցուեցաւ եւ անիկա Վրաստանի հարաւային սահմանի պաշտպանութեան գլխաւոր յենարանը դարձաւ:

Կիւրիկէ Ա. այնուհետեւ մեծ ջանքեր ի գործ դրաւ պահպանելու համար իր թագաւորութեան կիսանկախ գոյութիւնը, եւ այդ նպատակով ալ 1088ին մեկնեցաւ Խորասան ու բանակցութիւն ունեցաւ Մելիքշահի հետ: Բայց այսուհանդերձ թագաւորութիւնը սելճուքներու տեւական յարձակումներուն ենթարկուելով՝ կորսնցուց իր հողերուն մեծ մասը եւ գլխաւորաբար Տաշիր գաւառին մէջ սահմանափակուեցաւ: Կիւրիկէ Ա. մահացաւ 1089ին: Անոր յաջորդները՝ Աբաս եւ Դաւիթ միասին թագաւորեցին մինչեւ 1145, երբ Տաշիրն ալ կորսնցնելով՝ գացին Տաւուշ ու Մածնաբերդ, ուր փոքրիկ իշխանութիւններ հիմնեցին:

Այնուհետեւ հայեր իրենց փրկութեան յոյսը վրաց արքունիքին կապեցին եւ տեւաբար անոր օժանդակութեան ու հովանաւորութեան դիմեցին:

ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

